Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի «ԱՐՄՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերության արտահանման 2015-2017 թվականների ծրագրին հավանություն տալու և ապրանքների մաքսային արժեքի նվազագույն մեծությունը սահմանելու մասին» N 756-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. «ԱՐՄՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխված՝ ապրանքների մաքսային արժեքի նվազագույն մեծությունը սահմանել ըստ տարիների՝

1) 2015 թվականի համար՝ 14 մլրդ դրամ.

2) 2016 թվականի համար՝ 17 մլրդ դրամ.

3) 2017 թվականի համար՝ 18 մլրդ դրամ:».

2) որոշման հավելվածի 1-ին բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 18-րդ կետով.

«

18.	«ՍՄԱՐԹՓԱՈՒԵՐ» ՓԲԸ	Ռաֆիկ Մաշուրյան	ՀՀ, քաղ. Երևան, Պուշկինի 21, 103 սենյակ	286.120.941343	02656872	

»: